տարած Յովհաննես եպիսկոպոսի արտագրության մեջ, որը պահվում է Մատենադարանում և որը մենք օգտագործում ենք։ Այդ հատվածը պետք է համարել Շահխաթունյանցի լրացում։ Այսպիսի լրացում կա և իր՝ Եսայի կաթողիկոսի մոտ։

Ջալալյանցի մոտվին տեղագրումները շենքերի վրա նույնպես ճիշտ չեն. նրա նշած շենքերն ամբողջովին կանգուն են (գմբեթավոր եկեղեցին և զանգակատունը), բայց նման արձանագրություններ չունեն։ Մնացած եկեղեցիները շինված են անտաշ քարերով և երկար արձանագրությունների տեղ չունեն։

*Հրատ. Շահխաթունեանց, II, 359—360։ Ջալալեանց, I, 202—203։ Բարխուդարեանց, 206—209։ Տէր-Մովսիսեան, 97բ։*

## 79. ԾԱՐ-ՋԱՌ ԳՅՈՒՂ

Այս գյուղը եղել է պատմական Վայկունիք գավառի կենտրոնը, ուր էին «Բաղանիք արքունականք» ջերմուկը, այժմյան Իստիսու առողջարանը։ Հետագայում գյուղի անունով Ծար է կոչվել ամբողջ գավառը։ Այս գավառը երբեմնի միացած է եղել Սոդքին, ինչպես երեում է Ստ. Օրբելյանի ցուցակներից։

Ծար գյուղը միշտ էլ եղել է իշխանանիստ կենտրոն, իսկ վերջին դարերում՝ մելիքանիստ։ Այս գյուղից էր XVI դարի պատմագիր Հովհաննես Ծարեցին։ Գյուղը ժամանակին շատ մեծ ու բարեշեն էր, փռված ընդարձակ հարթության վրա, իսկ կողքի բարձունքների վրա ունեցել է ամուր բերդ։ Հուշարձաններով հարուստ այդ գյուղում 1962 թ. հետեյալ պատկերը տեսանք.

Ա. սբ. Սարգիս, թաղածածկ մատուռ է, կառուցված 1279 թ., պատերի ստորին կես մասերը շինված են մեծ և սրբատաշ քարերով, վերին մասերը կոփածո են, որը հետևանք է հետագա վերանորոգման, կանգուն է։ Մատուռի արևելյան կողմից կցված են երկու սենյականման շենքեր, որոնց պատերի մեջ օգտագործել են խաչքարեր և տապանաքարեր. դրանք այժմ վեր են ածվել պահեստի։ Այս մատուռի շրջապատում եղել են բազմաթիվ խաչքարեր, որոնք խսպառ անհետացել են։

Բ. Գերեզմանատուն. եղել է շատ ընդարձակ. մնացել են գետնի մեջ խրված անմշակ մի քանի տապանաքարեր և մի գեղաքանդակ խաչքար՝ մեծ արձանագրությամբ (1236 թ.)։

Գ. Բնակելի տուն. մի հոյակապ գլխատուն է, շատ ընդարձակ, չորս միակտուր քարե սյուները պահում են փայտածածկ կտուրը, որի կենտրոնում սովորական լուսանցքն է։ Սյուների և՛ խարիսխները, և՛ խոյակները նույնպես քարից են և լավ մշակված ու ձևավորված։ Պատերն արտաքուստ սրբատաշ են. այդպես են նաև այս գլխատան շուրջը եղած մի քանի ավելի մանր, սենյականման շինությունները։ Համաձայն արձանագրության, այս տունը շինված է 1658 թվականին։ Գյուղում այս քարասյուն տունը հայտնի է «Դաշ դիրալլի դամ» անունով, և նրա մեջ ապրում է Մեհտին Իսմալել Մուսա օղլու ընտանիքը։

Այս հնագույն և հազվագյուտ գլխատունը, որը ճշտորեն թվագրված է և փայտի փոխարեն քարե սյուների վրա կանգնած, անհայտ է մնացել ժողովրդական տներն ուսումնասիրողներին։ Նման բախտի են արժանացել նաև հենց այս գյուղում մեր տեսած՝ համակ փայտաշեն այն կառույցները, որոնց արժեքավոր նկարագրությունը տվել է XI դարի աշխարհիկ նշանավոր մտավորական Գրիգոր Մագիստրոսը։ Բերում ենք այդ հատվածը.

«Գերանք գերակատարք և երկայնաձիգք, որ է վկայարան սրբոյն Ցակոբայ. ամենայն կահք տաճարին գերակալ տախտակք և խոյակք և խարիսխք և թակաղաղք և գդրունս և զսեամս հանդերձ բարաւորօք և ներքոյ զատակս կազմեալ ի միոջ ծառէ յայնմանէ Գիւղն գոլ ասէին. զնա և զայլս ոմանս ի նույն աշխարհին ընդարձակագոյն սրահք և միջոցք այնմ տաճարի տեսեալ մեր, որ գրէթէ այսպիսի ոչ այլ արեք, բայց միայն ի թագաւորեալ քաղաքին»[1]— այսինքն Անիում։

---

[1] «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», բնագիրն առաջաբանով և ծանոթություններով առաջին անգամ ի լույս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, ՀԶ, էջ 221։

*Դ.* Մայր եկեղեցի, սբ. Սարգիս, սբ. Գրիգոր (*մայր մեծ եկեղեցի, սբ. Սարգիս, սբ. Գրիգոր*), *որոնք հիշատակված են Բարխուդարյանցի մոտ, հիմքից քանդվել են վերջին տասնամյակներում և դրանց քարերով գյուղամիջում դպրոցի շենք են կառուցել. դպրոցի պատերի մեջ բացի ձևավոր քարերից տեսանք նաև արձանագրության 6 բեկոր։*

*Ե.* Ծարա վանք. *կոչվել է նաև Դեռամիջոյ վանք, գտնվում է գյուղից ներքև՝ Թարթառի և Ծարա վտակի խառնարանի անկյունի բարձրադիր բլրի վրա։ Ճարտարապետական և արձանագրական հարուստ նյութ ունեցող այս վանքը նույնպես հիմնովին քանդել են վերջերս և նրա քարերով մոտակա Շիրակ քրդաբնակ գյուղում դպրոցի շենք կառուցել, որի պատերն ամբողջովին ձևավոր քարի և արձանագրության բեկորներ են։ Մենք արտագրեցինք 9 արձանագրություն, համեմատաբար մեծերը։ Դրանք հայտնի և անհայտ արձանագրության մասեր են։ Պատերի մեջ կան նաև խաչքարերի և գերեզմանաքարերի բեկորներ։*

*Ծարա վանքը հիմադրվել է 1301 թ. և եղել է Դոփյան տոհմի հոգևոր կենտրոններից մեկը։ Գրականության մեջ այն կոչվել է «Դեռամիջոյ վանք». գլխավոր տաճարը սբ. Աստվածածինն է։*

*Ժողովածուում տեղ գտած 41 արձանագրությունից 15-ը հրատարակվում են առաջին անգամ։*

**766. Ս. ՍԱՐԳՍԻ** ***արևմտյան մուտքի կիսակամար բարավորի վրա 6 տող.***

Թ: ✝ ՉԻԸ
ԻՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՏՐԱԹ
ԱՆԱՍԻ·ԻՊԱՐՈՆՈՒԹԻԴՈՒՓԻՆՈՐԴԻ
ՈՅՆ:ՈՀԱՆԵՐԷՑՈՒՈՀԱՆԷՍՇԻՆԵ
ՑԱՔ ՋՍԲ ՍԱՐԳԻՍՍԿԵՆԱՑԲԱՐԷԽ
ԱԻՍՀՈԳՈՑՓՐԿՈՒԹԻՈՎԿԱՐԴ

Թ⌊Վ⌋ԻՆ⌋ :ՉԻԸ: (1279). Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹ͞Ի. Տ͞Ր. ԱԹ|ԱՆԱՍԻ. Ի ՊԱՐՈՆՈՒԹԻ. ԴՈՒՓԻՆ ՈՐԴ|ՈՑՆ, ՈՀԱՆ ԵՐԷՑ ՈՒ ՈՀԱՆԷՍ ՇԻՆԵ|ՑԱՔ Ս͞ԲՔ. ՍԱՐԳԻՍՍ. ԿԵՆԱՑ ԲՍՐԷԽ|ԱԻՍ, ՀՈԳՈՑ ՓՐԿՈՒԹԻ. ՈՎ ԿԱՐԴԱ . . . . .

*Ծանոթ. Մնացել է թերի՝ տեղ չլինելու պատճառով։*

*Հրատ. Բարխուդարեանց, 466։*

**767. Ս. ՍԱՐԳՍԻ** ***արևելյան պատի հարավային անկյունում, արտաքուստ, երեսպատման մեծ քարի վրա՝ 4 տող.***

ԵՍԿԻՊՐԱՆՏՎԻՋԴԱՇՏԻՆՀՈՂ
ՅԵԿԵՂԵՑԻՍԵԿԱՐԱՊԵՏԱՌՆԷ:Ա:Պ
ԱՏՐԱԳՋՃՐԱԳԼՈՑՑՆՈՎԽԱՓ
ԱՆԵԴԱՏԻՅԱ:ԹՉԼԴ:

ԵՍ ԿԻՊՐԱՆ ՏՎԻ ՋԴԱՇՏԻՆ ՀՈՂ| ՑԵԿԵՂԵՑԻՍ ԵՒ ԿԱՐԱՊԵՏ ԱՌՆԷ :Ա: Պ|ԱՏԱՐԱԳ ՋՃՐԱԳԼՈՑՑՆ. ՈՎ ԽԱՓ|ԱՆԷ ԴԱՏԻ ՑԱ͞Ց. Թ⌊Վ⌋ԻՆ⌋ :ՉԼԴ: (1285):

**768. Ս. ՍԱՐԳՍԻ** ***հարավային պատի ստորին մասում, արտաքուստ, երեսպատման մեծ քարի վրա՝ 7 տող.***

· ՍԳՐԻԳՐՈՒԱՍՓ · · · ԱՔ
· · ԻՐԻՑԱՆՈՅՍ · · · ԱՆԽԱ
· ԱՆՉՏԱՆԻՆՋՏՐԿՈ ·ԱՍԷԿ
ԱՄԽԱՓԱՆԷԿԱՊԱԾՅԱՅՈՒՄԵՐՄ
ԵՂԱՑՍՏՐԷՈՒՏՐԸՆԴԱՌԱՔԻՆ
· · ՏՐԱԳՆ ԱՍՓԻՆԿԱՏԱՐԻՄԷՆ.ԵԿԵՂ
ԵՑԻՔՍ ԹՎՉԿ

· · ԵՍ ԳՐԻԳՈՐ ՈՒ ԱՍՓ[Ր]Ա ՏՈՒ[Ա]Ք · · · ԻՐԻՑԱՆՈՅՍ · · · · · ԱՆԽԱ ԱՆՉ(?)ՏԱՆ ԻՆՉ. Տ͞Ր. ՀՈ · · ԱՍԷ ԿԱՄ ԽԱՓԱՆԷ ԿԱՊԱԾ ՑԱ͞Ց. ՈՒ ՄԵՐ ՄԵՂԱՑՍ Տ⌊Է⌋Ր Է. ՈՒ Տ⌊Ե⌋ՐԸՆԴԱՌԱՋԻՆ [ՊԱ]ՏԱՐԱԳՆ ԱՍՓԻՆ ԿԱՏԱՐԻ ԱՄԷՆ ԵԿԵՂԵՑԻՔՍ. Թ⌊Վ⌋ԻՆ⌋ :ՉԿ: (1311):

769. *Ս. ՍԱՐԳՍԻ արևմտյան պատին, արտաքուստ 2 տող.*



ԵՍ ՀԱՑՐԱՏՈՒՆ ՏՎԻ Ս̅Բ. Ս˛ԱՐ˛Գ˛Ս˛ԻՍ :Ա: ՀԱՄԱԲԿ|Ի ՀՈՂԻՆ ԵԻ :Ա: ԺԱՄ ՏՎԻՆ ՁԾԱՌՁԱՐԴ˛ԱՐ˛ԻՆ. :ՑԺ ...

*Ծանոթ. Հրատարակիչը անձնանունը կարդացել է հայր Անտուն, իսկ նվերը՝ Համար-րակի հողին:*

*Հրատ. Բարխուդարեանց, 406:*

770. *Ս. ՍԱՐԳՍԻ արևմտյան պատին, արտաքուստ, մի երկար քարի վրա, խաչի ստորին մասում և թևերի շուրջը.*



ԵՍ| ⌜ԿՈԻ⌝|ԿՈՐՍ ⌜Տ⌝|ՎԻ ՁԻՄ . |. . .|. . .|
ԿՈՊԱՐ|ՈՎ ՈՀԱՆ| ԻՐԻՑՈ . .|. . .¦. . . .

771. *Ս. ՍԱՐԳՍԻ արևմտյան պատին, արտաքուստ 4 տող.*



ԵՍ ԿԶԻԿ ՏՎԻ| ԻՄ ՋԵՐՄԱՋՐԻՆ ՋԱ|ՂԱՑՆ Ս̅Բ. Ս|˛ԱՐ˛ԳԻՍ:

772. *Ս. ՍԱՐԳՍԻ արևմտյան պատին, արտաքուստ, մուտքի կամարից վեր մի տձև քարի վրա.*



ԱԼ˛Ա.ՔՍԻ|ԱՆՈՍ ՑԻՇ˛ԵՑԷՔ˛ Ի Տ˛Է˛Ր:

773. *ԽԱՉՔԱՐԻ մաս, ագուցված է ս. Սարգսի արևմտյան պատի հյուսի-սային մասում, արտաքուստ, խաչերի շուրջը 6 տող.*



ԱԾ. ՈՂՈ|ՐՄԻ| ՁՇԱՀ|ԹԱՄ|ԱՐ|ԻՆ:

*Ծանոթ. Անձնանվան սկզբի մասը կասկածելի է:*

**774. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *ագուցված է ս. Սարգսին արևելքից կցված շենքի պատի մեջ. շրջանակներին 2 տող.*

ԱԾ ՈՂՈՐՄԻՆԻԿԱՐԻՆԻԻՐՈՐԴԻՈՑՆՃՀԱՆ



ԱԾ. ՈՂՈՐՄԻ ՆԻԿԱՐԻՆ, ԻԻՐ ՈՐԴԻՈՑՆ ՃՀԱՆ|ԿԻՐԻՆ, ԳԱՍՊԱՐԻՆ:

**775. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *վրան քանդակված մի մարդ՝ խաչագանը ձեռքին, դիմացը երկու եզներ, ապա որսորդ՝ աղեղը լարած, իսկ դիմացը եղնի ոտների վրա ծառացած՝ վիրավոր այծ. սրանցից վեր Թվականը*

ԹՎ Ռ — ԹՎ[ԻՆ] :Ռ: (1551)

**776. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *բեկոր, նախորդի մոտ, Թերի մեկ տող.*

. . ԱՆԳԻՍՏԿԻՐ — . . . . . Հ[Ա]ՆԳԻՍՏ ԿԻՐ[Ա]ԿՈՍԻՆ . . .

**777. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *բեկոր, վրան մնացորդ մեկ տողի.*

. . ԻՆ ԹՎՌ . . — . . . . . ԻՆ. ԹՎ[ԻՆ] Ռ . . . .

**778. ԵՐԵՍՊԱՏՄԱՆ** *քարի վրա, որն աղուցված է երկրորդ մատուռի արևմըտյան պատի հյուսիսային մասում Թերի 3 տող.*



ՈՎԽԱՓԱՆԷԻՅԱՍ
ՆՁՈՎԵԼԵՂԻՑԻԲԱՆ
ՏՎԻՆԱՅԱ ‑ ԱԳՀԳ . .

ՈՎ, ԽԱՓԱՆԷ ԻՑԱՍ.
ՆՁՈՎԵԼ ԵՂԻՑԻ ԲԱՆ . . .
ՏՎԻՆ ԱՑԱ . . . .

Ծանոթ. *Սա մի մեծ արձանագրության մաս է, որի մյուս քարերը չկան. այս քարի վրա գրվածների վերջին մասերը ծածկված են մատառին կցված բնակելի սան պատով։*

**779. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ** *վրա, որն ագուցված է նախորդ արձանագրության մոտ. Թերի 2 տող.*

ԱՅՍԷՏԱՆԳԻՍՏՁԱՔԱՐՈՅ . .
ՈՈՆ

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՁԱՔԱՐՈՅ . . . . . . . .

**780. ԲՆԱԿԵԼԻ** *տան սյան խարսխի վրա 2 տող.*

ԹՎ: ՌՃԷ: ԷՐՏՐ
ՍՇԻՆՕՂ ԴԱՆՍ

ԹՎ[ԻՆ]: ՌՃԷ: ԷՐ (1658) ՏՐ. . . |Ս ՇԻՆՕՂ ԴԱՆՍ:

Ծանոթ. *Անձնանունից մնացել է վերջին Ս տառը, որի հիման վրա չենք վստահում վերականգնել այն։*

781. *ԽԱՉՔԱՐ, մեծ և զեղաքանդակ, կանգնած է գյուղի արևմտյան եզրին, նախկին գերեզմանատան մեջ. Թիկունքին 10 տող.*

ԹՈՁԵԱՅՍԱՐՁԱՆԱԻԾԵԼ
ՅՍԵՍԶԱՔԻՈՍՆՎԱ
ՍՏՔԱՀԱՆԱՅԿԱՆԳ
ՆԵՑԻԶՍՐԿԱԹՈՂԻԿԵՍԻԲ
ԱՐԷԽԱԻՍՀՈԳՈՅՀԱՐԱ
ՋԱՏԵՂԲԱՐՑԿԱԹՈՂԻ
ԿՈՍԻԵԻՊԱՊԻՈՍԻԵԻ
ԾՆՈՂԻՔԱՀԱՆԱՅԻՐՆ
ՏՐԵԼՈՅՅՈՒՍԻՓԱՅՈՐԻ
ՀԱՆԴԱՅԲԵՐ

ԹՎ⌊ԻՆ⌋ ։ՈՁԵ։ (1236)։ ԱՅՍ ԱՐՁԱՆ ԱԻԾԵ⌊Ա⌋Լ| Յ⌊Ի⌋Ս⌊ՈՒ⌋Ս⌋. ԵՍ ԶԱՔԻՈՍ ՆՎԱ|ՍՏ ՔԱՀԱՆԱՅ ԿԱՆԳ|ՆԵՑԻ ԶՍ⌊ՈՒՐ⌋Բ ԿԱԹՈՂԻԿԵՍ Ի Բ|ԱՐԷԽԱԻՍ ՀՈԳՈՅ ՀԱՐԱ|ԶԱՏ ԵՂԲԱՐՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵԻ ՊԱՊԻՈՍԻ ԵԻ| ԾՆՈՂԻ ՔԱՀԱՆԱՅԻ ԸՆՏՐԵԼՈՅ ՅՈՒՍԻՓԱՅ, ՈՐ Ի ՀԱՆԴԱՅԲԵՐ⌊Դ⌋։

Ծանոթ. *Թեև ազատ տեղ կա, բայց չի շարունակված։*

782. *ԲՆԱԿԵԼԻ տան հանգիստակաց սյան խոյակի վրա.*

ԵՍԱՎԱ
ՆԷՍՇԻ
ՆԵՑԻ

ԵՍ ԱՎԱ|ՆԷՍ ՇԻՆԵՑԻ։

Ծանոթ. *Համարում ենք շենքի ճարտարապետը։*

783. *ԴՊՐՈՑԻ պատերի մեջ ագուցված հին շենքերի և առանձնակի հուշարձանների քարեր ու բեկորներ, որոնցից վեցի վրա կան արձանագրությունների մասեր.*

ա

ԹՉ
ԻԳ

բ

ԱԾ ՈՂՈՐՄԻՆ

գ

ՍՐՈՐ
ՀԱՅ
ԿԵՂԵ
ՑԱՅ
ԵՐԻ
։ՊԾ։

դ

ՈՒՆԱԼ Ո
ԻՄԻՆ ՈՐԴ
Ի ՊԱՐՈՒՆ

ե

ԵՂԲԱԻՐՆՍԵՐՈԲՍԷՈՆԻՆ

զ

ԱԾ
ՈՐ
ՎԱՍ
ԿՈՅ

Ծանոթ. *Դրանցից Ա-ն հավանաբար ս. Գրիգոր մատուռի մեծ արձանագրության վերջում եղած թվականն է (տե՛ս № 794)։ Վերջին երկուսը՝ Ե, Զ, տապանաքարի և խաչքարի բեկորների վրա են, մնացածները՝ մեծ արձանագրությունների մասեր։*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԱՅԺՄ ՉԿԱՆ

784. *Ս. ՍԱՐԳԻՍ մատուռի մուտքի վրա.*

Շահանշահ կանգնեց խաչս ուղոց . . . . .

*Հրատ. Բարխուդարեանց, 406։*

785. *Ս. ՍԱՐԳԻՍ մատուռի հարավարևելյան կողմում.*

Ցանուն Աստուծոյ մեք Խաչատուր, Զաքարէս կանգնեցաք սուրբ խաչս բարե-

խաւս հաւրն իմոյ և եղբարց Վելին, Ովանէսին, Մարգարէին, Միրաքին. . . թվին :ՋԼԳ: (1484):

Հրատ. Բարխուդարեանց, 406։

786. *ՄԵՈՒՍ Ս. ՍԱՐԳԻՍ մատուռի մուտքից վեր խաչքարի վրա.*

Սուրբ Սարգիս: Քրիստոս որդի Դաւթի աւգնէ վասն Հասանայ անարժան ծառայիս յաւու ատենի. ամէն. թվին :ՉԻԳ: (1274):

Հրատ. Բարխուդարեանց, 405։

787. *ՄԵՈՒՍ Ս. ՍԱՐԳԻՍ մատուռի մուտքի հարավում կանգնած գեղաքանդակ զույգ խաչքարերից մեկի վրա.*

Թվիս հայոց :ՉԼԸ: (1289): Աստուծով ես Գրիգոր որդի Հասանայ, քաջ և հաղթող զաւրավարին և մեծի իշխանին Ականոյ, Հանդաբերդոյ, Սոթից, Շողգաեր և այլ բազում գաւառաց, կանգնեցի զխաչս ի գեղս, որ կոչի Ծար, սիրեցելոյն հաւրն իմոյ հայրենիք և պարգև քաջութեան:

Հրատ. Բարխուդարեանց, 405։

788. *ՄԵՈՒՍԻ ՎՐԱ.*

Սուրբ Աստուածածին, Քրիստոս, Աստուած. . . ես Մամքան, դուստր Քրդին ու Խորիշահի, ամուսին Հասանայ կանգնեցի զխաչս:

Ծանոթ. *Խաչքարի ճակատը զարդարված է եղել սրբերի պատկերներով։*

Հրատ. Բարխուդարեանց, 405։

789. *ՄԵՈՒՍ Ս. ՍԱՐԳԻՍ մատուռի արևմուտքում, գեղաքանդակ խաչքարի վրա.*

Քրիստոս Աստուած. ննջեցն բարեխաւս Դաւլաթին. Աստուծով ես Գաւլաթս, ի տանէն Գեղամայ, դուստր մելիք Ղուկասին, ամուսին իմ մեծ իշխան Միրզաջան, որդիքս իմ Տաւիտ բէկ, Մելիք պէկի զանգնեցին[ք], զխաչս փրկութիւն հոգոյ. թվին :ՋՂԸ: (1549):

Ծանոթ. *Հրատարակիչը տողերի տեղադրությունը շփոթել է։*

Հրատ. Բարխուդարեանց, 406։

790. *ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, Նախորդի մոտ.*

Այս է հանգիստ պարոն Ճհանկիր բէկին. թվին. :ՌՃԻԵ: (1676):

Հրատ. Բարխուդարեանց, 406։

791. *ՏԱՊԱՆԱՔԱՐԻ վրա, Նախորդի մոտ.*

Այս է հանգիստ Մէլիք Պէկ[ի]ն կողակից Շայամին, որ հանգուցաւ տապանս. թվին. :ՌՃԿԶ: (1717):

Հրատ. Բարխուդարեանց, 406։

792. *ՄԵՈՒՍ Ս. ՍԱՐԳԻՍԻ մատուռի հյուսիսային կողմում, խաչքարի վրա*

. . . . Միրզա Ճհան կանգնեցաք զխաչս բարեխաւս եղբաւրն իմ պարոն Ճհան բնուր? Շահիհանին . . . թվին. :ՋԿ: (1511):

Հրատ. Բարխուդարեանց, 406։

*793.* ***ՄԵԾ ԵԿԵՂԵՑՈՒ*** *հարավային մուտքին որպես բարավոր դրված խաչքար սարքին մասում.*

Ի թուին ։ՈՀԴ։ (1225). Ես Մելիք, հոգևորդի իմ Ակուտին ու Մխիթար եղբայր կանգնեցաք զխաչս։

*Հրատ. Բարխուդարեանց, 407։*

*794.* ***Ս. ԳՐԻԳՈՐ*** *մատուռի մուտքի բարավորին.*

Ես տէր շինեցի սուրբ Գրիգոր ի հալալ արդեանց. ինձ, ամուսնոյ իմ, որդո Մարգարէին. յիշեցէք ի տէր. թվին. ։ՉԻԳ։ (1274)։

*Հրատ. Բարխուդարեանց, 407։*

*795.* ***Ս. ԳՐԻԳՈՐ*** *մատուռի մուտքից հյուսիս մի քարի վրա.*

Յանուն Աստուծոյ Կուկս միաբանեցայ սուրբ Գրիգորիս (տվի) իմ հողն Սոսքանիսի. տուին ամագ հինգշաբաթ աւր ժամն . . . ։

*Հրատ. Բարխուդարեանց, 407։*

*796.* ***Ս. ԳՐԻԳՈՐ*** *մատուռի հարավային պատին, արտաքուստ.*

Աստուծով մեք Հաբըքի որդիքս տվաք զմեր կային հողն ի սուրբ Գրիգորիս. Սոսքանէս ես Ղազարու տանին ։Ա։ ժամ . . . . ։

*Հրատ. Բարխուդարեանց, 404 (Հաբըքի անձնանունը վերծանել է Տաբըքի).*
*Հրատ. Բարխուդարեանց, 407։*

*797.* ***Ս. ԳՐԻԳՈՐ*** *մատուռի հարավային պատին, նախորդի մոտ, խաչքարի վրա.*

Գրիգոր, Ջաջուռ կանգնեցաք խաչս մեզ և ծնողաց մերոց. Աստուած ողորմի. ։Շ։ (1051)։

Ծանոթ. *Անշուշտ խաչքարն օգտագործել են որպես շինանյութ, որովհետև ավելի հին է, քան մատուռի շինությունը։*

*Հրատ. Բարխուդարեանց, 407։*

*798.* ***ԾԱՌԱ ՎԱՆՔԻ*** *մեծ արձանագրության վեց բեկորներ դրված են Ջիբակ գյուղի նորաշեն դպրոցի պատերի մեջ, տարբեր դիրքերով։ Այդ բեկորները մասնակիորեն վերականգնում ենք, ապացուցելու համար նրանց նույնությունը մեծ արձանագրության հետ։*

Ա

. . ՄԵՐՀԱՅԵՑ . . . ԴՍԻՐՈՂԵԿԵՂԵ
. . ՄԵՐՏԷՐԵԻ . . . ՅԵՄՏԱՅԱՆ

Բ

Գ

ՎՋԱՒ
ԱԿԵԼՆՀ
ՓԱԴՈՒ

Դ

ԴՈՋՃՄԵԾԱ
ՆԱԽԱՀՄՅ

Ե

ԱՆԲԱ
ՍԴՈՓ
ՌԱԿԱ
ՋԻՆՈՅ

Զ

ԴԵԻՅ
ՍԲՆ

Ա. ԲԵԿՈՐ

. . . ԵՒ ՄԵՐ ՀԱՅԵՑԵԱԼ Ի ԶՈՐԱԿՍ . . .
. . . ԵՂԲԱՐՈՐԴԻ ՍԵՐ, ՏԷՐ ԵՒ ԻՇԽԱՆ ԳԱԻԱՌԻՍ . . .

Բ. ԲԵԿՈՐ

. . . ԳԻՒԳԻՈՐ ՍԻՐՈՂ ԵԿԵՂԵՑՈՑ . . . . .
. . . ԵԻ ՄՏԱ ՅԱՆԱՊԱՏՍ . . . . . .

Գ. ԲԵԿՈՐ

. . . . . . . . . . . . . . . . . . .
. . . ՀՈՋԱԿԵԼԻՆ ՀԱՂԲԱՏ . . . .
. . . ԱՍՓԱ ԴՈՒՍՏՐ . . . . .

Դ. ԲԵԿՈՐ

. . . ԳՈՒՈՉԱԲԱՐ ԵՒ ԾԱՆՐ . . . .
. . . Ի ՆԱԽԱՀԱՐՑՆ ՄԵՐՈՑ . . . .

Ե. ԲԵԿՈՐ

. . . . . . . . . . . . . . . . . .
. . . ՑՈՎՀԱՆՆԷՍ ԴՍՓԵԱՆ . . .
. . . ՔԱՋ ԶԱՒՐԱԿԱՆԻՆ . . . . .
. . . Ի ՄԻՋԻ ՆՈՑԱ ԲԼՐԱԿ ՄԻ . . .

*ԾԱՐԱ ՎԱՆՔԻ մեծ արձանագրությունը, ըստ նախկին հրատարակությունների*
Ի ժամանակին յորում տիրեալ էր ազգն նետողաց բազում աշխարհաց և մինչև յովկիանոս ծովն և Ստամպօլն, ի Պոնտոս և մինչև ցգետն Եփրատես, տիրելով զաւղաքար և ծանր հարկապահանջութեամբ ցաւեցուցանելով զամենեսեան, զմեծամեծս և զփոքունս ի մահ և ի գերութիւն մատնելով, յայսմ ժամանակի դառնութեան, որ էաք մեք տէր Յովհաննէս Գոփեան տրուպ և նուաստ և տնկար հոգի, հասաւ մեզ հրաման ի նախահարցն մերոց գնալ ի մեր հայրապետացն յառաջնոց յաթոռն հռչակելին Հաղպաս. այլ դարձ արարեալ ի մեր հայրենականն և բնիկ տունս հարազատ ազգ եղբաւր Հասանայ քաջ զաւրականին և հռչակաւոր արհացելոյն, որ և որդի իւր Գրիգոր սիրող եկեղեցոյ և քահանայից, և ամուսինն իւր բարեհամբաւ Ասփայ, դուստր մեծի կոմսի Տարսայիճի, իշխեցողի կողմանցն Սիւնեաց, և մեր հայեցեալ ի ձորակս, զի հաւէին ջուրք աստի և անտի և ի միջի նոցա բլրակ մի գեղեցիկ, ես հանեցայ ընդ սա և մտայ յանապատս և սկսայ շինել մատուռ մի. և յայսմ խորհրդի եկն Գրիգոր եղբաւրորդի մեր և իշխանն զաւառիս և այլ շատ կողմանց իշխեցող և կամեցաւ շինել զսուրբ Աստուածածինս ի բարեխաւս մեզ և ամենայն քրիստոնէից. ես տէր Յովհաննէս արարի սկիզբն շինութեան եկեղեցոյս ի թուին :ՉԾ: (1301):

*Հրատ. Շահխաթունեանց, II, 364—365։ Ջալալեանց, I, 208—209։ Բարխուդարեանց, 407—408։ Համեմատեցինք նաև Եսայի կաթողիկոսի տետրից արտագրվածի հետ*

***799. ԵՐԵՍՊԱՏՄԱՆ** մի քարի վրա, որը բերված է Ծարա վանքից և ագուցված Չիբակ գյուղի նորաշեն դպրոցի պատի մեջ, 4 տող.*

· ԱԾՈՒՐՄԻՄ
· ԻԹՄԱՅ: Ա:Պ
ԱՄԱՐԾՆԱԿԱ
ՄԾՋՄԻԿ :Դ·

Ա͞Ծ. ՈՂՈՐՄԻ Մ[Խ]ԻԹԱՐԱՑ. :Ա: Պ[Ա]ՏԱՐԱԳ ՆՄԱ
ԿԱ[Տ]ԱՐԻ ՉԱՏԻԿ :Դ: [ՇԱԲԱԹ ԱԻՐՆ]:

**800. ԾԱՐԱ ՎԱՆՔԻ** *գեղաքանդակ խաչքարի վրա.*

Աստուծով ես Սայտի, որդի պարոն Շանշին, քաջ և յաղթող զաւրավարին և մեծ իշխանաց յազգէն, ի թուին :ՊՀԹ: (1430), տեղեացս տէր և պարոն Փոքր Սիւնեաց, Ականայ, Հաթերքոյ և Հանդաբերդոյ և ծովակին Գեղամայ մինչ ի Շաղվաքայ, կանգնեցաք զխաչս հաւր մերոյ Շանշին. որք երկրպագէք յաղաւթս յիշեցէք:

*Հրատ. Շահխաթունեանց, II, 365։ Բարխուդարեանց, 408։*

## 80. ՁԱՓՆԻ ԿԱՄ ՋԱՆԿԻ ԳՅՈՒՂ

*Նախկինում հայաբնակ այս մեծ գյուղատեղում այժմ գրեթե ոչինչ չի մնացել։ Ջալալյանցն ու Տեր-Մովսիսյանը հիշատակել են հետևյալ հուշարձանները.*

*Ա.* Ս. Կարապետ, *եկեղեցի, կոփածո քարերով շինված.*

*Բ.* Մատուռ-դամբարաններ, *երեք հատ, եկեղեցու մոտ, որոնց մեջ եղել են անարձանագիր տապանաքարեր.*

*Գ.* Մատուռ-դամբարան, *որին որպես երկրորդ հարկ ծառայել է չորս միակտուր քարե սյուների վրա կառուցված կաթողիկեն (հավանաբար զանգակատուն է եղել). Ներքին հարկում եղել է մեծ տապանաքար, ըստ Ջալալյանցի՝* Աշոտոյ:

*Դ.* Այլ մատուռ, *հասարակ շենք.*

*Ե.* Տների մնացորդ *կամարակապ մասեր.*

**801. ԽԱՉՔԱՐԻ** *թիկունքին, որը կանգնած է եղել կրկնահարկ մատուռի գմբեթի տակ, 5 տող.*

Թուին :ՉԻԴ: (1275) կամաւն Այ.| ես Սուքման և Ուքնա| կանգնեցաք զխաչս հաւր| մերոյ Աւշաւտայ| և մաւր. յաղաւթս |յիշեցէք|:

Ծանոթ. *Առնում ենք Տէր-Մովսիսյանից, Ջալալյանցը ունի տարբերություններ, մանավանդ թվականը նշանակել է :ՉԽԴ:* Ուքնա *հավանական է՝* Ուքան:

*Հրատ. Ջալալեանց, II, 215։ Տէր-Մովսէսեան, 93բ. և «Ազգ. հանդ.» XXV, էջ 76։*

**802. ԿՐԿՆԱՀԱՐԿ** *մատուռ դամբարանի պատին.*

Յուսովն Աստուծոյ ես Հասան և Ջողբէգ և Ինանկ խաթուն զինչ Արթուրայ որդւոցն կայր ծախեցաք Հասանայ հողով և մարզով սուրբ Կարապետին. ետուն ամենայն եկեղեցիք Հասանայ. կատարիչք աւրհնին յաստուծոյ:

*Հրատ. Ջալալեանց, II, 215։*

## 81. ԼԵՎՈՆԱԲԵՐԴ—ԼՈՀԱԲԵՐԴ

*Սոդքի լեռնանցքով դեպի Թարթառ գետի հովիտը տանող ճանապարհն անցնում է Լև գետի ափերով։ Իստի Բուլաղ և Զափնի գյուղերի արանքում մի բարձր լեռան գագաթին գտնվում է այս փոքր բերդը, որի մեջ եղել են մատուռի ավերակները, իսկ բակում մի խաչքար, որի արձանագրությունն արտագրել և Տէր-Մովսիսյանին է ուղարկել լեռնային ինժեներ Աղաբաբյանը։*

**803. ԽԱՉՔԱՐԻ** *թևերի տակ և հյուսիսային կողին 17 տող.*

Թվ. :ՈԽԵ: (1196). ես կ . . . |րագ| յս . . . | ⌜կա⌝|նգն|⌜եց⌝ի| զխաչ[ս]յ| բարեխաւսու|թեն որ|դո ի մ|ո Խոստ|րովիկա| որ վախճ|անեցաւ| ի մէջ ա|յլազ⌜գեաց⌝ |որք կ⌜ար⌝դայ⌜ք⌝ . . . .

Ծանոթ. *Սկզբի և վերջի տողերի վերծանությունները ջարդված են։*

*Հրատ. Տէր-Մովսէսեան, 93։*